

տրի: ըստ համեմութեան Հարս աներեւութի: Համեն ծուներ կորացի երկնայնեաց եւ երկ- լայնաց եւ սանդարամետականաց: եւ ամեն լիզու արտաքս խոստովանեցէ Նմա: եւ ղստաստան արդարութեան յամենեւեան ա- րտացէ զ'ի գնդեկանս շարութեան: եւ գն- րեշտակս գանցաւորս եւ ի բացկացութեան կողեւա: եւ զամպարիշտս եւ զանիրաւ: եւ անաւրէնս: եւ գնայոյիչս մարդկան ի յաի- տեմականս հուր ատաքեցէ: իսկ սրբոց եւ արդարոց եւ զպատուիրանս Նորս պարա- րաց եւ ի սէր Նորս մնացելոց ոմանց ի սկզբա- նէ: իսկ ոմանց յապաշխարութենէ՝ կենդա- նութիւն շնորհեալ: անապականութիւն եւ զա- րս պատրաստեցէ: Հայս քարոզութիւն պարսոեալ եւ զայս հաւատ: որպէս նա- խասացաք: եկեղեցի: եւ թեպէտ յամենայն աշխարհի սերմնացեալ խնամածութեամբ պարէ: իբր զմի տուն բնակեալ: եւ նմանապէս հաւատայնոց իբր զմի անձն եւ զնոյն ունելով սիրտ: եւ քաղաձայնաբար զայտոսիկ քարոզէ եւ աւանդէ: իբր մի բերան ստացեալ: հա- լատ առաքելական ժայտակից ելով նշանաւո- րութեան** ի Նիկեա ժողովոյն:

26ո. հ. 1946.

Երանոսի հետեւողի առաքելոյն.

Որք հերձուռն եւ պատահեալ զմեզն, զորովամու պա- տահան ընկալցին: Բանդի ընկալեալն եւ անոսիք են: որք երկու ընդիրիսն տան բաժանեալ եւ ուրանն զպատ- ծոյ փեղորթին: զոր ի դիմանայ իւրում շնորհեաց մեզ:

Նորին յետ սակաւուց.

Որ եկն եւ մի ընդիրիսն Աստուծոյ եւ մարդոյն զոր- ծեաց: մեր ոչ կարացեալ կցորդ լինել անապանդութեան: որ աներեւոյթն եւ ի մեկէ կիւս անանկի: զի բոս ամենայն մասին կցորդութեան աւիցսի գտնապակաւորին:

Ի հաւատոյ բանէն Երանոսի Լոգզանայ կայս- րոպոսի:

Անշուտեալ են բարք հոգս Աստուծոյ եւ ոչ դիտելով զի արեւ սուս (2) Բանն Միութիւնն: որ միշտ ընդ մարդկա- րիսն միաւորեալ եւ ընդ ամայ գտնեալ ընդ իւրում սեղ- ծուածիս:

Նորին.

Ձերձուածս գործեն—զմեծափառաւորեալ մարմինն Բրիտանի բաժանեն եւ հասցիստեն:

Նորին.

Եսայի սուք. Մերձեցայ առ կին իմ մարգարե եւ ծնաւ որդի: սքանչելի խորհրդակից: Աստուած: հօր իշխան խորհրդով: զմի ընդիրիսն Բանին առ ի սեղծութեամ իւր յայնչիւն: Բանն մարմին կիւս եւ Որդին Աստուծոյ որդի մարդոյ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ:

— Եպրիլի 19-ին պապը երեք ժողով (կոն- սիստորիում) ունեցաւ. առաջին զաղտնի ժողովում պապը մի ծառ խօսեց, որի մէջ յայտնեց, թէ մտա- գիր է ծիրանաւորութեան աստիճան տալ մի քանի եպիսկոպոսների: Այնուհետեւ յայտարարուեցան եպիսկոպոսական աթոռների համար նշանակուած անձանց անունները: Անմիջապէս սրանից յետոյ տեղի ունեցաւ երկրորդ զաղտնի ժողովը: Ուր պա- պը յայտնեց, որ ցանկութիւն ունի երջանկայիշա- տակ Անտուան Մարի Զաքարիայի և Պիեր Փու- րիէի սրբացումը հանդիսապէս կատարելու: Ծիսա- կատարութեան միաբանութեան արքա Ելուաղ Մա- ղելլա կարգինալը մի ծառ խօսեց ապա, որի մէջ առաջ բերաւ յիշեալ սուրբ հայրերի կեանքն ու հրաշքները: Պապը դառնալով ծիրանաւորների ժո- ղովին՝ հարցրեց, թէ կարելի են համարու՞մ այս սրբացումը: Նրանք պատասխանեցին զրական կեր- պով (placet):

Սրանից յետոյ պապը բաց արաւ երրորդ հը- րապարակական ժողովը: Ուր բացի եկեղեցականնե- րից կային մի քանի արտօնեալ անձինք միայն: Ծի- րանաւորների հպատակութեան արտայայտութիւնից յետոյ, կոնսիստորիումի փաստարանն սկսաւ պա- պի աթոռի առաջ ծառել ի պաշտպանութիւն սրբաց- ման երջանկայիշատակ Զաքարիայի: Մի այլ փա- տարան Նոյնն արաւ երջանկայիշատակ Պիեր Փուր- նիէի համար: Քահայագետական չորս նօտարնե- րածանագրութիւն էին կազմում: Մինչ փաստարան- ները ծնկաչոք սպասում էին զահի աստիճանների վրայ, պապը Վոլպինի ծիրանաւորի բերանով պա- տասխանեց, որ սրբացումն հրատարակելը մի շատ ծանրակշիռ գործ է: Ուստի յորդորում է հա- լատացեալներին, որ աղաչեն Աստուծուն իրենց լոյս տայ, որ շտապեն: Վերջական վճիռը յե- տաճգուեց մինչև մայիսի 15: Այս պատասխանից յետոյ փաստարանները յետ քաշուեցան և պապը հանդիսաւոր օրհնութիւն տուաւ ամենքին:

— Էւոն ԺԳ. Սպանիոյ թագուհի խնամակա- լին Նուրիել է մի գեղեցիկ ոսկէ պսակ, որ ընդե- լուզուած է թանկագին քարերով:

— Իրանա Վաղմիկի փախճաւոր:—Դժուար թէ երբ և իցէ մի այնպիսի համաշխարհային խաբերայու- թիւն տեղի ունեցած լինի, ինչպիսին տեղի ունե- ցաւ միսս Դիանա Վոզհանի վերաբերութեամբ: Երարատի ընթերցողները ծանօթ են արդէն այն հրատարակութիւնների հետ, որ վերաբերում են, այդ օրիորդին և նրա ստանայի պաշտօնին վերա- բերեալ հրատարակութիւններին: Պէտք է նկա-

տեղի, որ հենց սկզբից շատերն եղան, որ կասկած չայտնեցին այդ օրիորդի գոյութեան մասին և մասնականների դէմ նրա գրածների վերաբերութեամբ, բայց կաթողիկէ եկեղեցին պաշտպանեց նրան և կամեցաւ դրանով հարուածել մասնակներին: Ահա թէ ի՞նչպիսի խայտառակութեամբ վերջացաւ այդ մասնական արշաւները: «Աննայ կաթողիկէ»-ը իւր ապրիլի 24-ի համարում զարմանալի պաշարիւն կերպով պատմում է այդ խաբերայութեան վախճանը: Ապրիլի 20-ին մի ժողով հրաւիրուեցաւ Փարիզում, Դիանա Վոգհանի, Ամոգէ դէի հարսնացուի և ապա կաթողիկէ դարձած մասնականի իրական գոյութիւնը հաստատելու համար: Այդ ժողովին հրաւիրուած էին յատկապէս մամուլի ներկայացուցիչները, բացի սրանցից ներկայ էին և շատ կղերականներ ու հաւատացեալ կաթողիկէներ:

Պ. Լիոն Տաքսէլը, այս խաբէութեան հեղինակը, կարգաց մի բանախօսութիւն «տասն և երկու տարի եկեղեցու դրօշի տակ», նա յայտնեց, որ իւր անունն է Պարրիէլ Ժոզանդ, ինքն է այն անձը, որ բազմաթիւ հակակղերական հրատարակութիւններ է արել, որոնց մէջ յարձակուել է կաթողիկէ եկեղեցու նրա վարդապետութեան և քահանաների դէմ, գրել է մի քանի անկրօն վէպեր, Յանկարծ մի օր յայտնել է աշխարհին, որ ինքը դառնում է իւր մոլորութիւնից, նրա այս գործը ժամանակին մեծ աղմուկ է հանել, մանաւանդ այն պատճառով, որ նա յայտարարել է՝ թէ այսուհետեւ պիտի իւր անձը նուիրէ եկեղեցու պաշտպանութեան:

Իրեւ թէ իւր անցեալ յանցանքը քաւելու համար նա սկսել է հրատարակել բազմաթիւ երկեր մասնակների դէմ, բայց է արել նրանց գաղտնիքները: Այս հրատարակութիւնները մեծ յաջողութիւն են գտել, նա ձեռք է բերել բազմաթիւ բարեկամներ, ընթերցողներ և պաշտպաններ, նրա հրատարակած հանդէսը «*Musée XIX. դարում*» յաջողութեամբ տարածուում էր շնորհիւ օրիորդ Դիանա Վոգհանի և Սոֆի Վալտերի կեղծիքների: Ահա հանդէս եկաւ օր. Դիանայի պատմութիւնը, նա՝ մասնակների ընտրեալը, Ամոգէ դէի հարսնացուն թողեց մասնականութիւնը և կաթողիկէ դարձաւ: Նորագործ մասնակնու անունով սկսան հրատարակուիլ հետզհետեւ ամէն տեսակ անճոռնի զրպարտութիւններ մասնակների դէմ: Կաթողիկէ քահանաները սիրով գնում էին այդ հրատարակութիւնները և հարստացնում էին Տաքսիլի գրպանը: Սկսան կասկածներ լսուել, շատերը չէին հաւատում օր. Դիանայի գոյութեան: Տրէնտի ժողովում 1896 թ. սեպտ. 15-օրին եպիսկոպոսը յարձակուեց այդ խաբէութեան հաւատացողների դէմ, սակայն Փարիզի քահանաներից մինը հաստատեց նրա գոյութիւնը և կաթողիկէ դառնալը, սակայն դրան վերաբերեալ պաշտօնական թղթերը չը հրատարա-

կուեցան, ինքը Լէօ Տաքսիլը, որ մասնակցում էր Տրէնտի ժողովին, երգմամբ հաստատեց Դիանայի գոյութիւնը, Խնդիրը փակուեցաւ, չը նայելով դրան գերմանացի կաթողիկէները դարձեալ չէին հաւատում օր. Դիանայի գոյութեանը: Այս կասկածների առաջն առնելու համար Լ. Տաքսիլը հրատարակեց Վատիկանից օր. Դիանային գրուած նամակը, ինչպէս և Դրենտրի եպիսկոպոսի նամակը, որ հաստատում էր օր. Դիանայի գոյութիւնը:

Արդ խնդիրն այս վիճակի մէջ էր, որ ապրիլի 20-ին, Լ. Տաքսիլը յայտնեց իւր հնարած կեղծիքի բոլոր գաղտնիքը 300 ժողովականների առաջ, Այդ պարոնը յայտնեց, որ ինքը ընկի Մարսիլլիացի է և սիրում է խորհրդաւոր կատակներ անել, միանգամ արդէն խաբել է Վիլլարուազնէ դօրափարին, երկրորդ անգամ մոլորեցրել է հնազանդներին՝ գրելով թէ ինքը մի քաղաք է գտել լճի տակ, այս խաբէութեան հաւատացել են շատերը և մի լեհացի հնապէս մի ամբողջ գիրք է գրել այդ քաղաքի մասին, որի հրապարակը գտել է, ուր նորան երեւցել է նոյն իսկ «հեծեալի արձանի նման մի բան»: Իւր այս խաբէութեանց մէջ Լ. Տաքսիլին օգնել է իւր հայրենակից յայտնի բժիշկ Բատայլը: Այս յառաջարանից յետոյ բանախօսը դարձել է ժողովին ներկայ կրօնաւորներին և ասել. «Եւրոպայումս իսկ, սակեղծօրէն շնորհակալ եմ մամուլի իմ կարողի զինակիցներից և մար սրբազան եպիսկոպոսներից, որոնք օգնել են ինձ գլուխ հանելու իմ աւանգընդիկ խաբէութիւնս: այն ու կը պատկի իմ գործունէութիւնս»:

Այս խօսքերից, յետոյ նա պատմել է թէ ինչպէս ինքը 1885 թուին կաթողիկէութիւն է ընդունել, մտել է յիսուսեանների մէջ, պապ ընդունելութիւն է գտել Լեոն Ժ.Պ. պապի մօտ, որի գրադարանում կան իմ բոլոր շարագրութիւններս ընդդէմ կղերականութեան: Բանախօսի այս յայտարարութիւնները ընդմիջուել են կաթողիկէների զայրոյթով, որոնք նրան «խաբերա՜յ, աւագա՜հ, և ի՞նչ այսպիսի գեղեցիկ ածականներով դարգարել են»:

Բանախօսը շարունակելով յայտնել է, որ 2 առլըստոնի եպիսկոպոսը Հռոմ՝ գալով բաց է արել կեղծիքը, հերքել է օր. Դիանայի գոյութիւնը, սակայն Վատիկանում պատուիրել են նրան լուծիւն պահել և պապի կողմից օրհնութիւն է ուղարկուել օր. Դիանային, որի գոյութիւն չունենալը զիտէին Վատիկանում:

Մեծ աղմկով է վերջացել այս ժողովը և բանախօսին ոստիկանները հազիւ են կարողացել ազատել կատաղած կաթողիկէների ձեռքից: Այսպէս ահա վերջացաւ օր. Դիանայի խնդիրը ի մեծ խայտառակութիւն պապականութեան, որ միջոցների ընտրութիւն չէ անում երբ կամենում է կռուել մէկի դէմ: Այս անգամ ընտրուած անարգ միջոցին ինքը զոհուեցաւ, սակայն այդ խրատ կը լինի ապագայի համար, կասկածելի է:

— Ապրիլի 11-ին պատն ընդունել է պարսից շահի դեսպանութիւնը՝ որ եկել էր յայտնելու նոր շահի գահակալութեան մասին։ Պապը շահի համար պարգև է ուղարկել մի մողակի պատկեր, իսկ դեսպանին շնորհել է Պիոս Թ. ի շքանշանը։

— Զատիկից յետոյ հասարակութեան թոյլ է տուած այցելելու Վատիկանի Բորջիայի ապարանքը, որ 400 տարի է փակ էր։ Այդ ապարանքի նորոգութիւնը Լեոն ԺԳ. պատն արել է իւր սեփական քանձարանի հաշուով։ Ինչպէս լրագիրները հաղորդում են, նորոգութեան ծախքը մի միլիոն ֆրանկ է եղել։

— Եայտնի հ. Զարմբտանի հրատարակութեամբ լոյս է տեսել մի նոր շարադրութիւն հայոց մասին, որի վերնագիրն է. «Հոգեվարք Հայաստանը և քրիստոնեայ Եւրոպան. կոչումն տէրութեանց զխապեաներին»։ (L'Arménie agonisante et l'Europe chrétienne. - Appel aux chefs d'Etats.)։ Եռաքարան ուղղուած է տէրութեանց զխապեաներին, դեսպաններին և վեց պետութեանց նախարարութիւններին, Հայր Զարմբտան այս նախարանի մէջ հետեւալն է ասում մերձաւորակէս. Մի ամբողջ ազգանիւրա կերպով դատապարտուած է կորստեան և մատնուած մի մահամտական իշխանի անագործութեան։ Այս լքուած ազգը ներկայումս ոչ միայն դժուում է, այլ և սարսափելի կերպով տանջուում։ Դժ.ք պիտի ազատէք նրան։ Մինչ զուր խորհրդածում էք, թուրքն աշխատում է իւր սպանութեան դործն աւարտել և Հայաստանում արիւնալի թատերախաղը օրէցօր ստեղծելի է դառնում։ Ձեր ժողովրդները վրդովուում են, նրանց քրիստոնեայ խղճատանքը չէ ըմբռնում այդ մահամտականութիւնը պաշտպանող քաղաքականութիւնը։

Արդացէք այս կոչումն, որ անում է ձեզ հոգեվարք Հայաստանը։ Արդացէք այս արիւնով և արտասուքով գրուած երեսները, որ իմ ձեռքս են հասցրել այդ թշուառ ազգի կրօնապետները, այն ազգի, որի հաւաքական պաշտպանութիւնը հանդիսաւոր կերպիւ ստանձնել էք Բեռլինի Ահհաժողովում, որին թոյլ էք տալիս այժմ ջնջուել ձեր աչքի առաջ, իրենց վայրենի նեղիչների ձեռքով։

Այն նուաստ քահանան, որին նրանք ընտրել են միջնորդ երկրիս մեծամեծների առաջ, ձեզ է դիմում ի սէր Քրիստոսի, ձեր Տիրոջ և Դատաւորի . . .

Երկինդ ունեցէք պատմութեան գաղտնասանից։ Առաւել ևս թող երկինդ ազգէ ձեզ Աստուծոյ գաղտնասանը։ Երգարութիւնը յաւիտենական է։ Այս հոգեվարք ազգը, որ քաղաքակիրթ ազգերի աւագն է, իրաւունք ունի ապրելու։ Երգարութիւնը հրաւիրում է ձեզ փրկել նորան մոտալուտ կորստից։ Ձեր իսկ շահը վերջապէս հարկ է դնում ձեր վրայ գործակից չը դառնալու իսլամին այս ոճրագործ

ջնջման։ Թողնելով որ այդ կատարուի զուր կը մեղանէք ձեր եղբայրների և Աստուծոյ առաջ . . . Բուն թուղթը գրուած է 1896 թ. գեկտ. 15-ին և մի ներածութիւնից զատ ունի առանձին առանձին գլուխներ, նուիրուած հայածանքի տեսախնդրին։ Ահա այդ գլուխների վերնագիրները. 1. Դատաւարութիւն. 2. Զնջումն ժողովրդի զըլեւսորների. 3. Ապստամբութեան ոճիրը. 4. Օրինական պաշտպանութեան դէպքեր. 5. Զէնքի արգելումն. 6. Բանի հաւատարացութիւն. 7. Հայ պաշտոնեայք. 8. Հարկեր. 9. Երկրագործական գրամատներ. 10. Մահամտական վաշխառութիւն. 11. Հարկապահանջներ. 12. Անդթութիւն հարկահանութեան. 13. Տասնորդի վճարումն. 14. Քրդերին տուած հարկը. 15. Գաղթականութիւն. 16. Բեգեւառ. 17. Աւրանորոգումն. 18. Անտանքի վիճակ. 19. Եւսահատութիւն. 20. Ի՞նչ անենք, ի՞նչ պիտի լինի մեր վերջը։

Այն վիճակը, որ նկարագրուած է այս թղթի մէջ կատարելապէս համապատասխանում է իրականութեան, այդ դիտելք մենք թէ գաղթականների պատմաններից և թէ եկեղեցականների տեղեկագրերից։ Այս թշուառութեան մէջ միակ միտքաւորութիւնն է եւրոպական քրիստոնեայ ազգերից ուղարկուած նպատար, որ մի կաթիլ ջուր է համաճարակ հրդեհի մէջ այրուողների համար, դժբախտաբար այդ ջուրն ևս դառն ու լեղի է երբեմն, որովհետեւ դրա գինը հաւատափոխութիւն է։ 2րդ դիտելք զարմանալք թէ ցաւենք այն դատարկազուխ միտողների վրայ, որոնք յանգնութիւն ունին մեզ վրայ լուսանքներ թափելու, երբ ցաւ ենք յայտնում և բողբոջում միսիոնարների հաւատ գնելու դէմ։ Հայ եկեղեցականութեան վրայ քարեր են ձգում, որ նա ինքը չէ օգնում ժողովրդին, կոյրերին աչք տալ շէնք կարող մենք, բայց ով աչք ունի՝ տեսել է և տեսնում է Հայոց Հայրապետի սրբալան Պատրիարքների և իրենց կեանքը ժողովրդի վրայ դնող հովիւների անքուն աշխատանքը թշուառներին խնամելու գործում։

— Գրաքննութեան մասին Լեոն ԺԳ. պապի վերջին կոնդակի զօրութեամբ կաթողիկ եկեղեցականութեան մէջ կարգապահութիւնն աւելի ևս խտացրած է։ Այդ կոնդակի զօրութեամբ այսուհետեւ ամեն մի կաթողիկ եկեղեցականի մանաւանդ ստորին կարգի եկեղեցականների շարադրութիւնները հսկողութեան պիտի ենթարկուին Լեոն ԺԳ. պատուիրում է քահանաներին ամեն ծեսով գրուածներ (գեկարուեստի պատմութեան, բնական գիտութիւն և ինքնաբերական) հրատարակել միայն իրենց եպիսկոպոսների թոյլտուութեամբ։ Այս քահանայ իրաւունք չի պիտի ունենայ այսուհետեւ խմբագիր դառնալու որեւէ օրաթերթի կամ հանդիսի առանց իւր առաջնորդի թոյլտուութեան։ Այս

կարգադրութեան մեծ նշանակութիւնն ապագայի համար ամենքին հասկանալի է, մասնաւորապէս եթէ աչքի առաջ ունենանք որ մի քանի կաթողիկէ երկրներում քահանայական դասը հակառակ ընթացք է բռնել կուսակրօն և վարչական մեծ պաշտօններ վարող եկեղեցականների գէմ:

— Աւերջին ժամանակներս ուսաց մամուլը խնդիր է հանել արեւմտեան նահանգներում կաթողիկէ եկեղեցիների մէջ փոխանակ լիհերէնի ռուսերէն ժամասացութիւն հաստատելու մասին: Երկրին և տեղական հանգամանքներին ծանօթ անձինք նշանակութիւն չեն տալիս այդպիսի փոփոխութեան: Նրանք պնդում են որ լեզուն նշանակութիւն չունի կաթողիկէութեան համար: Ռուս կառավարութիւնը ոչինչ չի շահուիլ ռուսերէն ժամասացութիւն մտցնելով: Հակառակ կուսակցութիւնը, ղլխաւորապէս եկեղեցական թերթերը, այդ կարծիքի չեն: Նրանք աւելի ևս հեռու են գնում: պահանջելով որ կաթողիկէ քահանայից կրթութիւնը պիտի կառավարութեան ձեռքը լինի և փոխանակ լատիներէնի պիտի դասատուութիւնը ռուսերէն լեզուով տեղի ունենայ: որպէս զի կաթողիկէ քահանաները հաւատարիմ հպատակներ մնան:

— Փարիզում մի սոսկալի հրդեհի զոհ գնացին մերձաւորապէս 150 անձինք: Բայց մեծի մասին աղնուական և հարուստ դասի կանայք: որոնք մի բարեգործական փաճառանոց (բաղար) էին կառուցել Ժան-Գուստէ փողոցի վրայ: Այդ փայտակերտ շէնքը անգգուշութեան շնորհիւ բռնկեց և գրեթէ քառորդ ժամում մոխիր դարձաւ: Այրուածների մէջ շատերը պատկանում են եւրոպական իշխանական ցեղերի ազգականներին: Այս դժբախտ պատահարի ատիւ ֆրանսիական կառավարութիւնը ցաւակցութիւններ ստացաւ եւրոպական բոլոր երկրներից: Դժբախտ զոհերի թաղման հանդէսը կատարուեց Փարիզի Կոտ-Դամ եկեղեցում ուրներկայ էին նախագահը, կառավարութեան բոլոր պաշտօնեաները, օտար տէրութեանց դեսպաններն ու արտակարգ լիազօրները: Այս տխուր հանդիսից օգուտ քաղեց յայտնի քարոզիչ Օլիվիէն և հարուածեց հասարակական ֆրանսիայի հակակրօնական ընթացքը: Աւելնողիւնները դժգոհ մնացին քարոզից: Ուստի և ֆրանսիական պառլամենտի բացման ժամանակ նախագահ Բրիսսոնը մի ծառով քննադատեց այդ քարոզն: արտայայտելով որ Աստուծու վեհ գաղափարն սխալ են ըմբռնում: Նրանք որոնք կարծում են թէ երկրի մեղքերը պատժելու համար կարող է Աստուած 150 անմեղ և բարեգործ կանանց կեանքը խլել: Պառլամենտը որոշեց այս ծառը տպագրել և հրատարակել ամենուրեք: Քաղաքակրթ ֆրանսիայի ներքին թերութիւններից մէկն էլ երևան եկաւ այս ատիւ: Հրդեհից ազատուած կանայք սարսափելի գոյներով են նկարա-

գրում այն աղնուական պարօնների ընթացքը: որոնք հրդեհի ժամանակ շէնքի ներսն են ելել: Այդ պարօնները բոլորեցին երկու պատկանի հարուածներով և աքացիով ծանապարհ են բաց արել սարսափահար կանանց միջով: Ըստ կանայք զեռ ևս կրում են այդ բարբարոսների հարուածների հետքերը: Սարսափի ժամանակ ազգականները թողել են իրենց մերձաւորներին: նշանածներն իրենց խօսեցեալներին և փախել: մինչդեռ վարձական ծառաներն և հասարակ բանուորները կեանքի փրկանքով շատերին են աղատել: Պատկարութիւնը չքանչաններով վարձատրել է այս հերոսներին: հասարակութիւնը մեծաքանակ դուսար է ժողովել աղքատ դասակարգի համար: իսկ աղատած տիկնանցից շատերը մեծաքանակ պարզւել են տուել իրենց աղատարարներին: Փարիզում այժմ միայն սկսել են ուշադրութիւն դարձնել այն շէնքերի ապահովութեան վրայ: ուր բազմութիւն է ժողովուում: Ֆրանսիական մամուլը պահանջում է դատի մատել այն աղնուական պարօններին: որոնք հրդեհի ժամանակ խնդ անվայել են պահել:

Հին ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ:

— Այս տարի սեպտեմբերին (ն.տ.) Աիէն-նայում տեղի պիտի ունենայ հին կաթողիկէների չորրորդ միջազգային ժողովը: Երգէն հրաւերներ են ուղարկուած շատ եկեղեցիների և բնգունելութեան մեծ պատրաստութիւններ են տեսնուում: որովհետեւ մասնակցողների թիւը բաւական մեծ պիտի լինի: Այդ ժողովին մասնակցելու հրաւեր է ստացել և մեր եկեղեցին: որ նախընթաց բոլոր ժողովներին ևս հրաւիրուած է եղել: բայց զեռ ոչ մի անգամ չէ մասնակցել: Ահա չորրորդ ժողովի ծրագիրը: Օգոստոսի 31-ին (ն.տ.) ընդունելութիւն հրաւիրեալների: Սեպտ. 1-ին. ա) հանդիսւոր ժամերգութիւն ոււտարանական եկեղեցում: ք) առաջին գումարումն նուիրակների. գ) առաջին հրապարակական ժողով: Դ) առաջին հասարակական ժողով:

Սեպտ. 2-ին. ա) Հանգստեան պաշտօն հին կաթող. եկեղեցում:

բ) Պատուիրակների երկրորդ գումարումն:

գ) Հանդիսւոր ծաշկերոյթ:

դ) Երկրորդ հրապարակական ժողով:

ե) Պամուր գումարումն:

Սեպտ. 3-ին. ա) Հանդիսւոր ժամերգութիւն հին կաթող. եկեղեցում:

բ) Պատուիրակների երրորդ ժողով:

գ) Գումարումն հին կաթողիկէների դաշնակցութեան, մամուլի ներկայացուցիչների և հրատարակիչների:

դ) Մեծ համերգ:

Սեպտ. 4-ին. — Ուղեւորութիւն զէպի Պալմա-րերգ:

Յանձնախումբի որոշած բոլոր հանգանքների համար տոմսակն արժէ 14 ֆլորին կամ 8 ոսուրլի։ Այս ժողովին պիտի մասնակցեն պատուիրակներ Պուլմինայից, Բուլգարիայից, Սերբիայից և այլ արեւելեան եկեղեցիներից։ Այս համաժողովն առանձնապէս հետաքրքրական է այնուհետք որ այդ տեղ պիտի քննուին մի քանի նշանաւոր վաւերացումներ, ինչպէս օրինակ՝ Պետերբուրգի այն յանձնախումբի լուրջութիւնը որ կազմուած է հին կաթողիկէ և օրթոդոքս եկեղեցու միութեան առթիւ ինչպէս և անգլիկան եպիսկոպոսների պապին ուղղած պատասխանը։

— Հին կաթողիկէների եկեղեցական թերթը «Գերմ. Մերկուրը» գովասանքով է խոսում Պոլսեւոյնուց մի «Մոսկովսկի Սրբորնիկի» մասին, ուր կրօնական խնդիրների մասին է խօսուի։ Բողոքական թերթերն ընդհակառակն պարտաւով են վերաբերում այդ հրատարակութեան, որի դերմանքէն լծարգմանութիւնն արդէն երրորդ հրատարակութեամբ է լոյս տեսել։

ՕՐԹՈՂՈՔԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

— Հելլենական եկեղեցին պատերազմի արհաւիրքներին մասնակից եղաւ. ինչպէս լրագիրները հաղորդում են՝ յոյն—տաճկական պատերազմի ընթացքում տաճիկներից գրաւուած գիւղերի և քաղաքների բոլոր եկեղեցիք կողոպտուած և սրբապղծուած են։ Թեսալոյոյ յոյն ժողովուրդը մեծ մասամբ փախուստ է տուել դէպի Լամիա և Ատտիկէ, իսկ թափուր մնացած գիւղերը կրակի են մատնուել տաճիկների ձեռքով։ Ահագին բաղմունքով փախուսականներ կան այժմ Լամիայում և նոյն իսկ Աթէնքում։ Երոնց վիճակը շատ դառն է։ Ընթերցի։ Պուլսաց կայսեր վահանն միջամտութեան, մայիսի 15-ից արդէն դադարել է արիւհեցումները և յոյս կայ որ շուտով խաղաղութիւն ևս հաստատուի՝ չընայելով տաճիկների մեծամեծ պահանջներին։ Եւրոպական ամբողջ մամուլը բողբոքում է այդ պահանջի դէմ և պնդում է, որ Յունաստանից մի գիւղ անգամ չի կարելի յանձնել տաճիկն, որովհետեւ Յունաստանը տաճիկ բարբարոս լծից ազատող Եւրոպան թող տալ չէ կարող, որ քրիստոնէայ Յունաստանից հող աւանուի և տաճիկն յանձնուի։

— Պարտութիւնը սխալութիւն է յառաջ բերել Յունաստանում և այժմ քննադատութիւններ են լսուում հելլենական տէրութեան բոլոր վիճակի վերաբերութեամբ։ Աթէնքի համալսարանի աստուածաբանութեան յայտնի ուսուցչապետ Դիոմիտ—Վիրիակը մի խիստ քննադատութիւն է հրատարակել հելլենական եկեղեցու մասին։ Մինչև ազատ Յունաստանում բարեկարգ վիճակ է

ստեղծուած քաղաքական հաստատութիւնների մէջ, եկեղեցական դրութիւնը մնացել է անխփփուս։ Եկեղեցականների մեծ մասը տղէտ է ինչպէս առաջ, ի բաց առեալ մի քանի եպիսկոպոսներից մնացեալ հոգևորականներից 90 տոկոսը մինչև իսկ ժողովրդական ղարոյի կրթութիւնն չունի։ Նիւթական վիճակն այնքան աղքատ է, որ շատ հոգևորականներ գրեթէ ողորմութիւնով են ապրում։ Հոգևորականութիւնն իւր աղքատութեան և տղիտութեան պատճառով ոչ մի ազդեցութիւն չունի։ Քարոյից զուրկ է ժողովուրդը, կան ծխեր, ուր 2—3 տարին հաջիւ մի անգամ քարոյ են լսում։ Համայնքները զուրկ հոգևոր կրթութիւնից և հմուտ առաջնորդներից՝ թաւուած են կրօնական տղիտութեան մէջ։ Եկեղեցական ճարտարապետութիւնը և պատկերազրութիւնն ևս ընկած է։ Այս բոլոր պատճառներով եկեղեցին ազդեցութիւն չունի ժողովրդի վրայ։ Պ. Դիոմիտ—Վիրիակը մի քանի միջոցներ է առաջարկում այս թերութիւնները վերացնելու համար։ Նախ կարեւոր է համարում նուազեցնել եկեղեցականների թիւը, որ այժմ հասնում է 7000 հոգու։ Նա կարծում է որ 2000 հոգի բաւական կը լինին ամբողջ հելլեն եկեղեցուն։ Եկեղեցականների թիւը պակսելով՝ կը լաւանայ նրանց նիւթական վիճակը. այն քահանան, որ այժմ հաջիւ 30—50 ծուխ ունի, կունենայ 200—300 և փոխանակ ամիսը 12—20 ֆրանկ արգիւնքի կունենայ 100—150 ֆրանկ արգիւնքի։ Բացի սրանից պէտք է պահանջել որոշեալ ուսման վկայագիր ամեն մի քահանայացուից։ Աթէնքի եկեղեցիների քահանաներից և եպիսկոպոսացուներից կարելի է պահանջել համալսարանի վկայական, իսկ գիւղական քահանաների համար պարտադիր կարող է լինել գաղտնական (սեմինարական) վկայագիրը։ Հելլեն եկեղեցին դեռ ևս երկար ժամանակ պիտի տառապի այդ խեղճ վիճակի մէջ, որովհետեւ պարտուած և աղքատացած Յունաստանը հաղիւ միջոցներ գտնի իւր այդ ցաւերը դարմանելու։

— Տիեզերական Պատերազմի մասին։ Պուլսի այժմեան պատերազմի մասին հետեւեալ կենսագրական տեղեկութիւններն ենք գտնում եկեղեցական թերթերում։ Նոր պատերազմը Առնստանգինը ծնուել է 1833 թուին Քիոս կղզում։ Նրա հայրը քահանայ էր, ուստի հենց մանուկ հասակում առիթ ունեցաւ իւր աչքի ընկնող ընդունակութիւնը ցոյց տալու Քիոսի մետրոպոլիտ Սոփրոնիոսին (որ այժմ Աղէքսանդրոյ պատրիարքն է)։ Սոփրոնիոսի պաշտպանութեան շնորհիւ նա միջին կրթութիւնն ստանալուց յետոյ մտաւ Խալկիի աստուածաբանական դպրոցը, որտեղից աւերտեց 1857 թուին և սկսաւ ուսուցչութիւն անել Սինդուում բայց իւր թոյլ առողջութիւնը կաղիւրելու համար քիչ ժամանակ յետոյ քնաց Աթէնք, ուր մնաց մինչև 1862 թ. լսելով

աստուածարանութեան դասեր համալսարանում. 1864 թ. Սոփրոնիստը իրրե Կ. Պոլսի պատրիարքի սարկաւազ ձեռնադրեց նրան և պահում էր իւր մօտ իրրե քարտուղար, Երիտասարդ սարկաւազը իւր պաշտպանի շնորհիւ ուղարկուեցաւ Ստրասբուրգ և աշակերտեց այնտեղի նշանաւոր աստուածարաններին, Քրանկ—Պրուսական պատերազմի ժամանակ նա անցաւ Զուիցերիա, այնտեղից էլ յետոյ Գերմանիա, ապա Փարիզ ու Լոնդոն, ամեն տեղ աստուածարանութեամբ պարապելով, 1872 թ. վերադարձաւ Կ. Պոլիս. Բուլղարական եկեղեցու բաժանումը դատապարտող եկեղեցական ժողովին մասնակցելուց յետոյ գնաց Ալեքսանդրիա Սոփրոնիստ պատրիարքի մօտ, այնտեղից կրկին դարձաւ Կ. Պոլիս Անթիմոս Զ. պատրիարքի օրով, 1874 թ. արեղայ ձեռնադրուեցաւ, 1876 մետրոպոլիտ դարձաւ Մետիքինէի, ուր 18 տարի առաջնորդութիւն անելուց յետոյ 1893 ստացաւ Եփեսոսի մետրոպոլիտութիւնը, Այս տարի Զատիկից առաջ ընտրուեցաւ Կ. Պոլսի պատրիարք և շուտով արժանացաւ սուլթանի շնորհներին, 2ընայելով յոյն-տաճկական պատերազմին նա պահպանեց իւր դիրքը և հովուականներով հրաւիրեց տաճկին հպատակ յոյներին չապստամբել և հաւատարիմ մնալ սուլթանին, երբ տաճիկներն առաջարկեցին իրենց տարած յաղթութիւնների համար մաղթանքներ կատարել, պատրիարքը մերժեց այդ առաջարկը:

— Մակեդոնիայում տիրապետող աղիւնդութիւն ունենալու ջանքը օրէցօր գրգռում է բալկանեան փոքրիկ տէրութիւններին, Շնորհիւ վերջին պատերազմի բոլղարներն ու սերբերը մեծ արտօնութիւններ ստացան Բ. Գոնից և տիեզերական պատրիարքի թեմերը հետզհետէ անցնում են բոլղարներին, իսկ յոյն եկեղեցականների և դպրոցների փոխանակ մուսթը են գործում սերբիականները:

Ռուսաց եկեղեցի. — Ռուսաց եկեղեցական մամուլը գանգատուում է, որ օրէնքը պաշտպանութիւն չէ ցոյց տալիս քահանայական դասին, Քահանան ևս ինչպէս ամենայն սոսկական անձն, կարող է հրապարակական վիրաւորանքի համար դատարան դիմել և գահացումն ստանալ, Այս հանգամանքից օգտուելով լեհերն ու հրէայք յաճախ դիտաւորեալ կերպով վիրաւորում են ռուս քահանաներին, որոնց համար ամենայն անգամ դատարանին դիմելը յարմար չէ, Մոգիլեօվի նահանգում վերջերս մի դէպք առիթ է եղել այս խնդրի յարուցուելուն, Վիրշի Պեւզներ անունով մի հրէայ միտքը դնում է ամենայն անգամ անպատուել օրթոդոքս քահանային, երբ պատահի Տեղական ժողովուրդը գրգռուելով՝ քիչ է մնում որ յարձակումն գործէ հրէաների վրայ, նահանգապետը այս բանի առաջն առնելու համար հրամայում է ոստիկաններին բանտարդել Պեւզներին և մարմնական

պատիժ տալ, Ոստիկանապետը այնքան ձեռնում է հրէին, որ սա մի քանի ամիս հիւանդանում է, ռուսի դատի է մատնուում ոստիկանապետը և նահանգապետի վարմունքն ևս նկատողութեան է առնում Արդ եկեղ. մամուլը պահանջում է յատուկ օրէնքներով պաշտպանել քահանայից դասի պատիւը:

— Յունուարի 28-ին կատարուած համառուսական աշխարհագրի ժամանակ բաղմամբիւ այնպիսի դէպքեր են տեղի ունեցել, որոնք որոշում են ժողովրդի ընդհանուր բնաւորութիւնն ու կրթութիւնը, Հարաւային—Ռուսիայում օրինակ աղանդաւոր ռուսաց մէջ տարածուել է, որ աշխարհիս վախճանն հասել է, ռուսի աղանդաւորներից մէկի ձեռքով շատերը կենդանւոյն թաղուել են, Այժմ քրննութիւն է սկսուած այդ գործի համար և խեղճ զոհերի նեխած մարմինները հանում են հետզհետէ իրենց գերեզմաններից, Արեւմտեան նահանգներում Հոգովի հետ միացած ռուս կաթողիկոսներն հաւատացրել են, որ Պետերբուրգի կառավարութիւնը մտադիր է վերականգնել Լեհաստանը և գաղմեցնել ոչ կատարեալ կաթողիկոսներին, այս պատճառով շատ ունիւսմեք (միարանեալներ) իրենց կաթողիկ են արձանագրել տուել:

— Ռուսաց թեմական առաջնորդները կարեւոր են համարել պատուիրել խստիւ, որ քահանայք կիւրակէ և տօն օրերին առաւօտեան ժամերգութիւնից չը գրկեն ժողովրդին, Ինչպէս երևում է շատ եկեղեցիներում երիտասարդ քահանայք, բայց նոյն իսկ վանքերում վանականները, վերացրել են ինքնազուտ կերպով առաւօտեան ժամերգութիւնը:

— Սամարայի թեմական կառավարութիւնը դիտելով՝ որ թեմի քահանայք զանցառութեան են տալիս Զ. ժողովի որոշման 86 կանոնը, որ արգելում է ամուսնաթողներին հաղորդել, խստիւ պատուիրել է այսուհետև ճշտութեամբ կատարել յիշեալ կանոնը:

— Պերմի թեմական առաջնորդը տեսնելով որ քահանայութեան համար դպրանոցներում պատրաստուածները հրաժարուում են ծիսական եկեղեցիների քահանայութիւնից, որոշել է քահանայութեան աստիճան տալ և այնպիսի անձանց, որոնք դպրոցական կրթութիւն չեն ստացիլ կատարելապէս, Ընծայացուների համար առանձին քննութեան կանոններ են սահմանուել:

— Զատիկական օրերին տնօրհնէքի առթիւ տեղի ունեցած ատելութիւնների առաջն առնելու համար «Յերկ. Վեստ» առաջարկում է քահանաներին միայն այն անձանց տուելը գնալ օրհնելու, որոնք վաղօրօք այդ մասին ցանկութիւն կը յայտնեն:

— «Յերկ. Վեստ» ցաւելով արձանագրում է քարոզչական յանձնարարների անդամների տարեցտարի նուազումն, այսպէս Արխանգելի մասնաճիւղ-

զը Հիմնուելու տարին ունեցել է 497 անդամ, իսկ
երրորդ տարին 72 անդամ:

— Լեւոդասան աղանդաւորների դարձը հետզհետէ շատանում է, մինչդեռ Շատուրիաս կոչուած աղանդը օրէցօր մեծ ծաւալ է ստանում՝ բուն ոռոտական թեմերում: Եկեղեցական մամուլը պահանջում է խիստ միջոցներ ձեռք տանել այդ աղանդի դէմ, չը գոհանալ միայն քարոզիչներին բանտը դրնելով՝ որովհետեւ դրանց տեղը նորերն են ծնում: այլ աշխատել գերմանական զաղութները շուտով ոռոտացնել որովհետեւ դրանք են այդ աղանդի կենդանւորները:

— Ինչպէս յայտնի է Ռուսիայում միակ ժողովուրդը, որի համար գրել — կարգալը պարտաւորել է, հրէից ժողովուրդն է. իւրաքանչիւր հրէայ ուսանում է իւր ռաբիից մայրենի լեզուն և կրօնը, բայց որովհետեւ սինագոգաների զարդոցները աղատ են կառավարութիւնից հակոգութեանց, ուստի առաջարկուում է հակոգութիւն սահմանել զրանց վրայ ևս:

— Եկեղեցական պատկերների նկարչութիւնը բարձրացնելու համար թեմական առաջնորդներն սկսել են խրախուսել նկարչութիւն գլխաւորից աւարտածներին այդ գործով պարագլելու։ Առանձնապէս խրախուսուում են այն նկարիչները, որոնք հոգեւոր դասին են պատկանում և կամ ցանկութիւն ունեն հոգեւորական դասնայու։

— Ուսաց ծխական եկեղեցիներում սովորութիւն կայ տարեգրութիւն պահելու ծխի մէջ երեւան եկած կրօնական-բարոյական կեանքի երևոյթիւների մասին, Հասկանալով այսպիսի տարեգրութիւնների մեծ նշանակութիւնը, ուշադրութիւն են դարձնում այժմ գրանց վրայ, Քննութիւնից երևում է, որ շատ եկեղեցիներում այդ տարեգրութիւնները կամ չեն պահում և կամ շատ տարօրինակ և աննպատակ ձևով են պահում, օրինակ՝ արձանագրում են միայն օրինակատարութիւններից հանած վիճակագրութիւնները կամ լրագիրներից քաղում են քաղաքական լուրեր ելին Այս հանգամանքը աչքի ասած ունենալով մի քանի լիւրժանկալներ վճռել են որոշեալ խնդիրների համար բաժանմունքներ ունեցող տետրեր տպագրել և բաժանել եկեղեցիներին, Այսպիսի տարեգրութիւն պահելու սովորութիւն ունեցել են մեր հներից շատերը, ախտո՞ր որ այդ սովորութիւնը այժմ վերհիւղին մոռացուած է, Շատ ցանկալի կը լինէր այժմ մտցնել մեր ծխական եկեղեցիների մէջ ևս այդ սովորութիւնը, որպէս զի հնար ունենանք հայ համայնքների կրօնական-բարոյական կեանքի պատկերը ձուլել տարեցտարի և սպառնացող վտանգներին առաջն առնել:

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ:

— Զը նայելով որ ոուսաց ս. Սինդիկ դատա-
խաղ Պորեգոնոսցովը իւր ժամանակակից վիճելի
ինդիքները կոչուած շարագրութեան մէջ խստու-
թեամբ, յարձակուում է անդլիկան եկեղեցու վը-
րայ, համարելով որ Նրա մէջ բողոքական սկզբուն-
քը մարմնացած է, վերջին ժամանակներս ոուս ե.
անդլիկան եկեղեցիներին մէջ միութիւն հաստատե-
լու միտումները զօրանում են, Զատկի տօնն
րին Նօբրի արքեպիսկոպոսի Պետերբուրգ ե. Մոս-
կուս պեյքէլէն երկու կողմի համար եւ ուրախաբով
է եղիլ, Ընդլիսացիք շատ դո՛հ են մնացել իրենց
եղած ընդունելութիւնից, Թայմի թղթակիցն ար-
տադրելով արտ փաստը յիշեցնում է, որ անգլիկան
եպիսկոպոսները վաղուց են սկսել միութեան ձրգ-
տումներ ցղոց տալ, մինչ ոուսաց կողմից ե ոչ մի
քայլ չէ արուած այդ նպատակով:

— Ընդհանուր — անդլիկական եկեղեցու ժողովրդ, որ տանն տարեկեր մի անգամ է տեղի ունենում այս տարի կը դու մարուի մի տարի առաջ: Այսպէս կոչուած Լաթրեսեան ժողովը ամենադեղեցիկ արտայայտութիւնն է անդլիական ազգի կրօնական — բարոյական կեանքի: Այդ ժողովին մասնակցում են բոլոր եպիսկոպոսական եկեղեցիք աշխարհիս ամենայն կողմից: Առաջիկայ ժողովի ծրագիրն արդէն ծանօթ է Վերաբառի ընթերցողներին: Այս ժողովն տոանձնապէս հետարբերական է յարուցուած միութեան խնդրի պատճառով: Յերկ. Աւետ քանկութիւնն է յայտնում, որ այդ ժողովին ուստաց եկեղեցականութիւնից ևս ներկայացուցիչ լինի պնտեղ, Հայաստանեայց եկեղեցու վերաբերութեամբ անդլիկական եկեղեցու յարաբերութիւնները միշտ բարեկամական են եղել, մինչև իսկ անդլիկական եկեղեցու ձեռնադրութեան առաքելական յաջորդութեան նշանաւորութիւն տալու համար քանկութիւնն է յայտնուած մի քանի նշանաւոր քահանայից կողմից եպիսկոպոսի ձեռնադրութիւնը Հայոց Հայրապետից ստանալու: Այս իսկ պատճառով քանկալի կը լինէր տեսնել այդ վեհ ժողովում և հայ եկեղեցու մի պատկառելի ներկայացուցիչ, որի պարտականութիւններից մէկը կը լինէր խօսքով զօնէ շնորհակալութիւն անելու ամբողջ անդլիկական եկեղեցուն այն կարեկցութեան համար, որ նա բոլորից աւելի ցոյց տուաւ հալածուած հայերին:

ԲՈԳՈՔԱԿԱՆ, ԷԿԵՂԵՑԻ՝

Գրմանիս. — Այս ամառ Առաքելի գում պիտի
գումարուի արևադարձային և սոցիալական կուսակցու-
թեան համագործակցութեամբ առաջ ունենալով այս

ժողովի քաղաքական նշանակութիւնը շատերը Գերմանիայում հակառակ են դրան և Լայպցիգ քաղաքի նշանաւոր Թոմաս-Կիրխէ կոչուած եկեղեցու հոգաբարձութիւնը մերժել է թոյլ տալու որ այդ եկեղեցում տեղի ունենայ հանգիսաւոր ժամերգութիւն:

— Տաճկահայոց թշուառութեան կարեկցող դերմանացիք գոկտ. Լեպսիուսի շնորհիւ Բմբունելով հայ քրիստոնից հալածանքի նշանակութիւնը երկու տարի է ի վեր մօտ 700,000 մարդ դրամ են ժողովել, որ կամենում են կոտորածներից ազատուածների թշուառութիւնը մեղմացնելու գործ դնել: Այդ զուտ քրիստոնէական կուսակցութեան նպատակը չէ կրօնական քարոզչութիւն անել և թշուառ հայերի հաւատը դրամով գնել, ուստի և նրանք յատուկ պատուիրակ են ուղարկել Պարսկաստանի Տաճկաստանին սահմանակից գաւառները, խնամելու դադմական և փախստական հայերին և մի ապաստանարան հիմնելու անտէրունչ որբերի համար: Այդ մարդասիրական գործի զուլս է կանգնել պատուր Գիշերը, որ այս օրերս իւր երիտասարդ ամուսնու և երկու գերմանուհի ողորմած քոյրերի հետ միասին ռեզորուեցաւ Խոյի և Սալմաստի կողմերը:

Շուեդիա. — Օսկար Բ. թագաւորի յօբելեանի առթիւ այս ամառ օգոստոսի 31 մինչև սեպտ. 4 տեղի կունենայ կրօնական դիտնական մի համաժողով Ստոքհոլմում:

ԲԱԺԻՆ ՀԵԹԱՆՈՍԱՅ.

Զինուստն. — Իտալիացի պատէր Մակվայն, որ իւր ամբողջ կեանքը Զինաստանումն է անցկացրել և լաւ դիտէ չինարէն, կաղմել է այդ լեզուի բառգիրքը և դրա համար Լեոն ԺԳ. պապի օրհնութեան արժանացել: Այս քարոզիչն ահա ինչ է տեսում Զինաստանի վերաբերութեամբ. «Թէպէտ ամեն մի բողոքական քարոզիչ տարէն 5000 ֆրանկ է ստանում, իսկ կաթոլիկ քարոզիչը 500 ֆ., այնուամենայնիւ 20,000 բողոքականի դիմաց այնտեղ 2,000,000 կաթոլիկ չինացիք կան, Զինացիք կրօնասէր են և ամենքն էլ Աստուած են ճանաչում, նրանց մէջ անաստուածներ չկան. տիրապետող ազանդները երեք են. կոնֆուցեան, բուդայական և թանական, Վայսը կոնֆուցեան է, բայց խնամակալ է համարուում և միւս ազանդներին, եւս հաւատում եմ որ չինացիք քրիստոնէութիւն կընդունեն՝ եթէ հանգամանքները փոփոխուեն»:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԵՏՄԱԿԱՆ.

* *

Ախ, ես գիտեմ՝ թշուառ եղբայր,
Ժամը է խաչը տկար ուսիդ.
Ճակատագիրն իբրեւ խորթ մայր
Ձէ՛ ժպտացել դեռ երեսիդ:

Գիտեմ՝ վաղուց ես դու տուր
Անցնել անքուն երկար գիշեր,
Եւ արցունքով գերդ ազատը,
Մէկ մէկ համբել կեանքիդ օրեր:

Բայց դու գիտե՛ս, որ դեռ անվիշտ
Ձէ տեսնուած մի հողածին,
Եւ չեղածի յուսովն է միշտ,
Որ տալիս ենք կեանքին մի գին.

Հաւատում ենք, թէ կը գայ օր —
Բաղը երազ չի թուիլ մեզ,
Թէ կը բացուի նա փառաւոր
Առաւօտեան վառ շողի սէս.

Թէ կը ցամքի դառն արտասուք,
Լոյս կը դառնայ այս սեւ գիշեր,
Կը փարատուին կսկիծ եւ սուգ —
Կը գայ մայիս շնորհաբեր:

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԻԱՆ.